զի բովանդակ եկեղեցականք Հայէչաց բիւրաւոր անձինք , ամենեքեան նզովս կարդան 'ի վերայ եպիսկոպոսին Ղըպթոց և աքսորեն զնա 'ի թագաւորական քաղաքէն ։ Եւ նորա եկեալ յԱտլա քաղաք 'ի սահմանս Հայէչաց , Բդեչխ նորին ինքնիշխան և ապստամբ 'ի Թագաւորէն , ընդունի զեպիսկոպոսն և պահէ առ իւր ։ Բայց ռամիկ դասն ժողովրդեան որ քան զոր 'ի քաղաքաց քաղաքաց առաքէին զհարիւրաւոր անձինս առ այն բանադրեալ եպիսկոպոս ձեռնադրել 'ի կարգ քահանայութեան · զի ասեն թէ 'ի բովանդակ Թագաւորութեան Հայէչաց են եկեղեցիք աւելի քան զ10,000 , եւ գտանի յիւրաքանչիւր եկեղեցի գոնէ 70—80 քահանայ , ոչ այնչափ 'ի հարկաւորութիւն քահանայագործութեան , այլ առ 'ի վայելել զեկամուտս եկեղեցեաց , զի իւրաքանչիւր եկեղեցիք և վանօրայք , ունին բաւական եկամուտս կերակրելոյ զբազմաթիւ անձինս , և տան եպիսկոպոսին զարդիւնս 120 քաղաքաց , այլ թէ որչափ ինչ կարէ լինել՝ չէ յայտ , միայն եթէ գնացողն իբրեւ Հայէչ վարեացի հանդերձիւք և կերակրով , բազում ինչ յաւելանայ , զի բաց յարդեանց 120 քաղաքաց , մեծամեծ անձինք արք եւ կանայք բերեն առ եպիսկոպոսն զկտտորակս ոսկւոյ 'ի խնդիր օրհնութեան ։

ԳԼՈՒԽ ԽԷ.

Վիճակ Աթոռոյն Երուսաղէմի ։ Պարտատեարք ։ Յակոբ և Գիմնէսիոս ։ Տառապանք միաբանից 'ի զօրաց Կուսակալին ։ Յովհաննէս վարդապետ Զմիւռնացի ։ Նեղութիւն և դժուարութիւն վասն Իլամի Գատաւորին ըստ հրովարտակի Արքային ։ Ծախք Իլամին ։ Մեկնիլ Յովհաննու 'ի Կոստանդնուպօլիս ։

ԿԻՐԱԿՈՍ եպիսկոպոս առաքեաց առ Պօղոս եպիսկոպոս յարդեանց կալուածոց 4000 ռուպիէ ոսկի՝ թէպէտ և գժտեցան ընդ այն իշխանաւորք տեղւոյն , զի Պօղոս եպիսկոպոս յառաջագոյն պատուիրեալ էր նոցա չառաքել ինչ յԵրուսաղէմ , մինչեւ արդեամբք բազմացին կալուածք